Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-04-2020 թ. որոշմամբ
«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Մարշալ Բաղրամյան պող. շ. 24
1.3 Պետական գրանցման համարը		222.160.750182
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-01-21
1.5 ՀՎՀՀ-ն		00120533
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10521362
		+(374)55030007
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://hayagithimnadram.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@hagithimnadram.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ավետիք Իսահակյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	14	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրի պահպանման և զարգացման	56534900
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
՞Բանբեր հայագիտության՞ հրատարակում	9531544	
՞Հիմնպրար հայագիտություն՞ էլեկտրոնային հանդես	4821877	
Գրքերի տպագրում	9152147	
Հայագիտական հետազոտական թեմաների ֆինանսավորում	21557000	
Կոնֆերանսների և սեմինարների կազմակերպում	3429700	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	60374150	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	48492268	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 2 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

PHP
PHP Partners

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան,Այեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան,Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. (+374)10204090
Tel.
Էլ-փոստ general@php.am
E-mail

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Հաշվետվություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Առանցքային աուդիտորական հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

2019 թվականի ընթացքում Հիմնադրամն իր գործունեությունը ծավալել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից 47,112 հազար ՀՀ դրամ դրամաշնորհից գոյացած գումարներից: Հիմնադրամը դրամաշնորհը ստանում է դրամաշնորհի հատկացման պայմանագրի հիման վրա, որը ներառում է միջոցների ծախսման վերաբերյալ նախահաշիվ: Հիմնադրամի կողմից ստացված դրամաշնորհները ճանաչվել են որպես շնորհ, որը մաշեցվել է շնորհի ստացման պայման հանդիսացող նախահաշվի հիման վրա ծախսերին համահունչ:

Շնորհների մասով մեր աուդիտորական ընթացակարգերը ներառել են՝

- Շնորհների ստացման գործընթացի քննարկում ղեկավարության հետ.
- Կատարված ծախսերի և նախահաշվով ներկայացված ծախսերի համադրում ընտրանքային եղանակով և այդ գումարների՝ շնորհների մաշվածության հետ համեմատում.
- Ղեկավարության հետ ստացված շնորհներից գոյացած մնացորդի հետագա օգտագործման քննարկում.
- Հիմնադրամի կողմից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային ներկայացված դրամաշնորհների օգտագործման հաշվետվությունների ընտրանքային ստուգում և համեմատում ճանաչված ծախսերի հետ.
- Շնորհների ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի համեմատում 2019 թվականին ներկայացված նախահաշվի հետ:

Մեր կողմից կատարված աուդիտորական ընթացակարգերի արդյունքում մենք հավաստիացանք ղեկավարության՝ շնորհների հաշվառման տեղին լինելու մեջ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների ղեկավար

«Փի-Էյչ-Փի ՓԱՐԹՆԵՐՍ»
«Փի-Էյչ-Փի ՊԱՐՏՆԵՐՍ»
«PHP PARTNERS»
01554985

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ

20 ապրիլի 2020թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.06.2020 14:37